Արձանագրություն N 2
«ՓԱԲ-ՇՀԱՊՁԲ-(15/3)-16/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

24 մարտի 2016թ
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ն. Հովհաննիսյանը
անդամներ՝ Ա. Հարությունյանը, Գ. Թավադյանը
քարտուղար՝ Գ. Ձանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Ն. Հովհաննիսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	*Մասնակիցների անվանումները*		*Մասնակիցների հասցեներ և կապի միջոցները*
1	«Սմարթլայն» ՍՊԸ	-	ք. Երևան, Վարդանանց 110, հեռ. 010 55 84 83, ssmartline@mail.ru,
2	«Փեն բոքս» ՍՊԸ	–	Ք. Երևան, Ա. Խաչատրյան, բն. 13,14 հեռ. 010 58 17 07, penboxyerevan@yahoo.com

բ) Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

գ) Մասնակիցների կողմից առաջարկված գինը ներկայացված է ստորև.

Չափ. համարը	Ապրանքների անվանումները		*Մասնակիցների անվանումները և առաջարկած գինը ըստ չափաբաժինների առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)*		*Նախահաշվային գինը*
			«Սմարթլայն» ՍՊԸ.	«Փեն բոքս» ՍՊԸ	
1	2		3	4	5
1	Հաշվիչ մեքենաներ		24583.33	41667	30000
2	Թանաք, կնիքի բարձիկի համար		1750	6667	14000
3	Գրիչ գնդիկավոր 1		16250	41667	35000
4	Գրիչ գնդիկավոր 2		50000	100000	80000
5	Մարկերներ		16666.67	18000	27200
6	Գրիչ գելային		10000	7500	12000
7	Մատիտներ		10000	10000	8400
8	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ		13333.33	16667	22500
9	Թղթապանակ՝ ամրակով 1		35000	40000	72000
10	Թղթապանակ՝ ամրակով 2		12083.33	22917	22500
11	Թուղթ, կազմի, ստվարաթղթե		10000	16667	32000
12	Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար		7500	10000	12000
13	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով		24166.67	24167	46000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

1.1 Ընդունելով ի գիտություն, որ 7-րդ չափաբաժնի համար մասնակիցների առաջարկված գների ինքնարժեքը գերազանցում է նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ մերժել մասնակիցների ներկայացրած հայտերը 7-րդ չափաբաժնի համար

բ/ 7-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ՝ հայտով առաջարկված գինը /գների ինքնարժեքը/ գերազանցում է տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ն. Հովհաննիսյան)

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են «ՓԱԲ-ՇՀԱՊՁԲ-(15/3)-16/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին: Մասնակիցների կողմից ներկայացված՝ բացված ծրարում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

բ/ 1-6-րդ և 8-13-րդ չափաբաժինների համար 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ–ին, 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Փեն բոքս» ՍՊԸ-ին:

գ/ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

դ/ ծանուցել 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-11-րդ, 13-րդ չափաբաժինների համար առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով հրավերի 7.5 կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ գնային առաջարկի վերաբերյալ:

ե/ հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ:

զ/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 12:15-ին, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 24, 1-ին մասնաշենք, N16 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ն. Հովհաննիսյան

անդամ՝ _____ Ա. Հարությունյան

_____ Գ. Թավադյան

քարտուղար՝ _____ Գ. Ձանջուղազյան